«Քայլ առ քայլ»բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ «Սաների հայրենաճանաչողական ձևավորման կարևորությունը»

Դաստիարակ՝ Խաչատրյան Անժելա

Մանկապարտեզ՝ «Տեղի թիվ 1 ՆՈՒՀ» ՀՈԱԿ

Բովանդակության

Ներածություն——————————————————————————————3

Գլուխ 1——————————————————————————————4

1.1——————————————————————————————4-6

1.2——————————————————————————————6-8

Գլուխ 2.——————————————————————————————9

2.1——————————————————————————————9

2.2——————————————————————————————10-15

Դիտարկում——————————————————————————————16

Գրականության ցանկ——————————————————————————————17

Ներածություն

Ով չի ճանաչում իր հայրենիքը, չի կարող ճշմարիտ սիրել նրան: Ռաֆֆի

Հայրենիք մի սպասեք օտարից և ճակատագրից, եթե դա ձեր արյունով պաշտպանելու չափ հայրենասեր չեք:

Նա ով չի սիրում իր հայրենիքը, ոչինչ չի սիրում:

Արդի ժամանակներում առավել կարևոր է 5-6 տարեկան սաների հայրենաճանաչողական ձևավորման կարևորությունը: Հայրենաճանաչողական ձևավորման կարևորությունը նպաստում է երեխաների մեջ սերմանելու սեր դեպի հայրենիքը:

Ես կարծում եմ, որ մեր ազգի նկարագիրը մեր այս պայմաններում պահելու և հայրենիքին տեր կանգնելու հիմքում ընկած է հայրենաճանաչողությունը:

Հայրենիքը այն թանկարժեք տարածքն է, որի համար իրենց կյանքն են զոհել շատ հայորդիներ: Ուստի մենք պարտավոր ենք պահպանել և փոխանցել հաջորդ սերունդներին: Նույնիսկ մեր ազգի ծագման և ինքնանվան առաջացման մասին առաջնային է Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը»:

Հայրենաճանաչողությունը բարոյական և հայրենասիրական կրթություն է: Հայրենաճանաչողության արժեքային համակարգի ձևավորումը պետք է դրվի ընտանիքում և մանկապարտեզում:

Հետազոտության նպատակն է երեխաների մեջ զարգացնել ազգային արժեքներ, գիտակից և պատասխանատու անհատ, ապագայում ճանաչեն ու սիրեն իրենց հայրենիքը:

Հայրենաճանաչողական ուսուցման նշանակությունը: Մեր հայրենիքի խորհրդանիշների՝ դրոշի, զինանշանի և օրհներգի միջոցով ուսումնասիրել և ճանաչել հայրենիքը:

Գլուխ 1

1.1 Հայրենաճանաչողության ձևավորման կարևորությունը նախադպրոցական տարիքի երեխաների համար

Հայրենիքը սիրում ես ոչ թե նրա համար, որ մեծ է, այլ նրա համար, որ քոնն է: Սենեկա

Հայրենասիրության պատմական աղբյուրը դարերով ու հազարամյակներով առանձին պետությունների գոյատևումն է որոշակի վայրում, ինչի արդյունքում ձևավորվում է կապվածություն հայրենի հողին, լեզվին ու ավանդույթներին, այն ներառում է ազգայնականությանը հատուկ մի շարք երևույթներ: Ազգերի կազմավորման ու ազգային պետությունների ստեղծման պայմաններում հայրենասիրությունը դառնում է հասարակական գիտակցության բաղադրիչ մաս XVIII դարում:

Հայրենասիրական դաստիարակությունը հայրենիքի հանդեպ սիրո դաստիարակություն է: Նրա նվիրվածությունը, նրա հանդեպ պատասխանատվությունը:

Նախադպրոցական տարիքի երեխաների հայրենասիրական դաստիարակության խնդիրները բավականին շատ են: Հիմնականը սովորում են սիրո զգացում իր հայրենի բնության, ընտանիքի և տան հանդեպ, ինչպես նաև ուղղակիորեն այն երկրի պատմությանն ու մշակույթին որտեղ նա ապրում է:

Պետք է հաշվի առնել, որ յուրաքանչյուր երեխա զգում է զգացմունքների օգնությամբ իրեն շրջապատող իրականությունը: Ահա թե ինչու ցանկացած աճող սերնդի հայրենասիրական դաստիարակությունը պետք է սկսվի սիրո զգացումն իր հայրենի քաղաքի, բակի, մանկապարտեզի, երկրի նկատմամբ:

Հայրենասիրություն սերմանելու գործընթացը գաղափարական աշխատանքի անբաժանելի մասն է ու հիմնական խնդիրներից մեկը: Դաստիարակի և ծնողի խնդիրն է երեխաների մեջ հնարավորինս արթնացնել սերը հայրենի հողի նկատմամբ: Նրանց մեջ ձևավորել այնպիսի բնավորության գծեր, որոնք կօգնեն

նրանց դառնալ արժանավոր մարդ և իրենց երկրին արժանի քաղաքացի: Հայրենաճանաչողական դաստիարակության նպատակն է կրթել հայրենասեր ով սիրում է իր հայրենիքը, հավատարիմ է հայրենիքին:

Ավագ նախադպրոցական տարիքում զարգանում են բարձր սոցիալական մոտիվներ և զգացմունքներ: Այս ազդեցության արմատները գտնվում են ժողովրդի լեզվում, որում նա ապրում է: Երեխան սովորում է երգերից, խաղերից:

Այլ անձանց վերագրելով հայրենասիրական զգացմունքներ, իսկ որոշ իրադարձությունների տալով հայրենասիարական նրբերանգ՝ բնութագրող անձը դրանով հաճախ տալիս է դրական գնահատական: Այն հակադրելի է ունիվերսալիզմից առած եկած աշխարհաքաղաքացիության հոսանքին, որը ենթադրում է համամարդկային շահի գերակայում նեղ ազգային կամ էթնիկ շահից: Հայրենասիրության մասին պատկերացումները տարբեր են: Այդ պատճառով էլ ոմանք իրենց համարում են հայրենասեր, մյուսները՝ ոչ:

Հայրենասիրություն, բարոյական և դիվանագիտական սկզբունք, հասարակական զգացողություն, որի իմաստը սերն է հայրենիքի նկատմամբ և պատրաստություն ստորադրել նրա համար սեփական շահերը:

Հայրենասիրությունը ենթադրում է հպարտություն հայրենիքի նվաճումների հանդեպ: Հայրենասիրությունը ենթադրում է ազգային շահերի պաշտպանում, կապվածություն սեփական հողին, սեր դեպի հայրենիքի մշակույթը և սեփական լեզուն:

Հայրենասիրությունն ինչ գեղեցիկ ճառագայթ մըն է վեհ ու անմեղ ճակատագրի վրա: Պետրոս Դուրյան

Հայրենասիրությունը նաև հայրենիքի համար զոհված հերոսների հիշատակը անմար պահելն է: Հովհաննես Իսակով

Հայրենասիրությունն ամենախոր զգացմունքներից մեկն է ՝ ամրացված դարերով ու հազարամյակներով: Վլադիմիր Իլյիչ Լենին

Ազգի ռազմական հանճարը հայրենասիրությունն է, սերը դեպի հայրենիքը: Գեորգ Լիխտենբերգ

Եթե պիտի մեռնենք, ապա թող այդ լինի սուրը մեր ձեռքին և կռվի դաշտում: Անարգ կյանքից ավելի՝ ազատ կյանքն է գովելի: Մուրացան

Չկա ավելի խոր զգացում, քան հայրենասիրությունը: Պարույր Սևակ

1.2Ի՞նչ է հայրենասիրություն

Հայրենասիրության գաղափարն առանձնահատուկ տեղ է գրավում ոչ միայն հասարակության հոգևոր կյանքում, մշակույթում, այլ նաև նրա գործունեության բոլոր կարևորոգույն ոլորտներում, քաղաքականության, տնտեսության, գաղափարախոսության, բնապահպանության մեջ:

Հայրենասիրությունը ենթադրում է մարդու դրական հատկանիշների համալիր ձևավորում և զարգացում: Նրա հիմքում ընկած են հոգևոր-բարոյական և սոցիալ-մշակութային բաղադրատարրեր: Հայրենասիրությունը հանդես՝ գալիս հայրենիքի հետ իր անբաժանելի լինելն ու միասնականությունը գիտակցող անձի հոգևոր արժեքների քաղաքացիականության և սոցիալական ակտիվության հետ միասին: Էությամբ այն միասնական է, բայց միևնույն ժամանակ բազմաբնույթ է իր դրսևորումներում: Սակայն առ այսօր դեռ չի ձևավորվել միասնական, բոլորի կողմից ընդունելի կարծիք, թե ինչ պետք է հասկանալ հայրենասիրություն ասելով:

Հայրենասիրության ըմբռնմանն ուղղված մոտեցումների ողջ բազմազանությունը կարելի է պայմանականորեն դասել ուղղությունների:

Առաջին ուղղության մեջ կարելի է ներառել այն տեսակետն ու դատողությունները, որոնք հայրենասիրությունը սահմանում են որպես հայրենիքի հանդեպ սիրո վեհ զգացմունք: Այս ուղղությունը բնորոշում է բնության, հայրենի տան, ծննդավայրի, մանկության պատկերների հանդեպ սիրո վերացական դրսևորմամբ:

Երկրորդ ուղղությունը հիմնվում է հայրենասիրության՝ որպես բարձրագույն, առավել կարևոր ու էական զգացմունքներից մեկի ըմբռնման վրա: Սակայն այստեղ, հուզական կողմի հետ մեկտեղ, ներառվում է նաև գործնական տեսանկյուն. Հայրենասիրական զգացմունքի ուժը չի սահմանափակում հայրենիքի հանդեպ սոսկ սիրո խորությամբ, վեհությամբ, այլ մղում է ակտիվ գործողությունների՝ հանուն սեփական հայրենիքի բարօրության:

Երրորդ ուղղությունը հայրենասիրությունը դիտարկում է որպես հասարակական երևույթ, որի բովանդակությունն ու բնույթը նշանակալի չափով պայմանավորվում են հասարակության, պետության պատմական զարգացման առանձնահատկություններով, իշխող ընտրախավի քաղաքականությամբ:

Խորհրդային հասարակական համակարգի պայմաններում հայրենասիրությունը գաղափարախոսական կարևորագույն հիմքերից մեկն էր, հանդես էր գալիս աճող սերնդի դաստիարակության առանցքային ուղղությունների շարքում:

Չորրորդ ուղղությունը բնութագրվում է նրանով, որ հայրենասիրության օբյեկտ է դիտվում պետությունը: Այն անվանում են «պետական հայրենասիրություն»:

Հայրենասիրության այդ տարատեսակի ի հայտ գալը պայմանավորված էր պատմական առանձնահատուկ պայմաններով: Այն առաջացավ՝ կապված պետության վերջինիս ամրապնդման համար պետական իշխանության տարբեր ձևերի ստեղծման ջանքերի համախմբման անհրաժեշտության հետ:

Հինգերորդ ուղղությունը բացահայտում է հայրենասիրության էությունը հենց անձի հետ անբաժանելի կապի հետ միասին, որը նրա համար բարձրագույն արժեք է: Տվյալ ուղղությունը կոչվում է նաև անձնային հայրենասիրություն:

Վեցերորդ ուղղությունը որպես հայրենասիրության սուբյեկտ շատ հաճախ դիտարկում է անձին: Հայրենասիրությունն ըմբռնվում է որպես անձի հոգևոր զարգացման, ինքնարտահայտման կարևորագույն փուլ: Դա հայրենասիրության բարձր մակարդակն է:

Հայրենասիրությունը անձի առավել նշանակալից բարոյական արժեքներից է, անհատի կարևորագույն հոգևոր ձեռքբերումը, որը բնութագրում է նրա զարգացման բարձրագույն մակարդակը և արտահայտվում է ինքնադրսևորման ակտիվ գործունեությամբ՝ ի բարօրություն հայրենիքի:

Գլուխ 2

2.1 Հայրենաճանաչողության ուսուցման դաստիարակչական նշանակությունը

Նախադպրոցական տարիքը երեխայի անհատականության զարգացման շրջան է: Մտածելով հայրենասիրական զգացմունքների ծագման մասին նրանք միշտ դիմում են մանկության տպավորություններին: Սա պատուհանի տակ ծառն է, սա այն փողոցն է որով նրանք քայլել են, և հայրենի մեղեդիները:

Հենց այս շրջանը նպաստավոր է հայրենասիրական զգացմունքների դաստիարակման համար: Հայրենասիրության զգացումը պետք է լինի գիտակցված և ուժեղ: Հետաքրքրություն առաջացնել երեխայի մոտ հայրենի հողի, հայրենիքի հանդեպ սիրո զգացողության ձևավորում՝ հայրենի մշակույթին և ավանդույթներին ծանոթանալու համար:

Ժամանակակից հանրակրթարանի խնդիրներից է երեխաներին ծանոթացնել հայ ժողովրդի պատմամշակութային ժառանգությանը, նպաստել երեխաների հայրենասիրական դաստիարակությանը: Այն տեղի է ունենում նաև երաժշտության ուսուցման գործընթացում հայրենասիրական կարողունակությունը ուսուցանելիս:

Այս հետազոտության թեմայի արդիականությունը պայմանավորվում է նրանով, որ հենց հայրենիքի համար պայքարին, հայրենիքին, հայրենիքի պաշտպան հերոսներին, զինվորներին ու բանակին նվիրված ազգային ազատագրական ժողովրդական ռազմի ու զինվորի երգերն են ազդում կրթվող սերունդների հայրենասիրական դաստիարակության գործընթացի առդյունավետության վրա, նրանց տալիս բարոյական բարձր ուղենիշներ և նպաստում ազգային արժեհամակարգի ձևավորմանը:

Հայրենասիրական երգերի ազգային-ազատագրական ու ժողովրդական երգերի ուսուցման նշանակությունը և կարևորությունը, վերջիններս օժտված են երեխայի արժեհամակարգի ձևավորման և նրանց մեջ հայրենասիրություն դաստիարակելու հայկական ներուժով:

2.2 Պարապմունքի պլան

Թեման՝ «Իմ հայրենիքը Հայաստանն է»

Տեսակը՝ զրույց

Նպատակը՝

- Երեխաներին ծանոթացնել Հայաստանի քարտեզին, Հայաստանի Հանրապետության զինանշանին: Դաստիարակել սիրո և հպարտության զգացումը:
- Զարգացնել երեխաների խոսքը:
- Հարստացնել երեխաների բառապաշարը, սովորեցնել խոսքի մեջ գործածել ածականներ և դրանք համակցել գոյականների հետ:

Անհրաժեշտ պարագաներ՝ ՀՀ քարտեզը, դրոշը, զինանշանը, օրհներգը, նկարներ Հայաստանի քաղաքների և գյուղերի մասին:

Պարապմունքի ընթացքը.

Բանաստեղծությունը՝ ունկնդրման և քննարկման համար.

Հայրենիք

Մեր մեծ հայրենիք

Ինչ կա աշխարհում

Քեզնից անառիկ

Ու քեզնից սիրուն

Սարերդ՝ բարձրիկ

Դաշտերդ անծայր

Ջրերդ քաղցրիկ

Արևդ պայծառ:

Դու տվել ես մեզ

Ծաղիկ ու ծիծաղ

Երգ մանկապարտեզ

Թե՛ ուսում, թե՛ խաղ:

Դու տվել ես մեզ

Թռիչքի թևեր

Որ բարձրանանք մենք

Սարերից էլ վեր:

Զրույց բանաստեղծության բովանդակության շուրջ.

- Ինչի՞ մասին է պատմում հեղինակը բանաստեղծության մեջ:
- Ի՞նչ է նշանակում Հայաստան բառը, մեր բոլորի համար:
- Ի՞նչպես են անվանում մեր հանրապետությունը:
- Քարտեզի վրա ցույց տվեք մեր հայրենիքը:
- Եկեք քարտեզի վրա ցույց տանք Հայաստանի տարածքը և պատմենք՝ ինչեր կան մեր երկրում:
- Ուշադիր դիտեք քարտեզը և որոշեք՝ ո՞ր գույներն են գերիշխում Հայաստանի տարածքում: Քննարկել, թե ո՞ր գույնն ի՞նչ է նշանակում:
- Ինչով է հարուստ մեր երկիրը:

Ֆիզկուլտ դադար.

Երեխաները կանգնում են շրջանաձև և կատարում բանաստեղծության բովանդակության համապատասխան շարժումները:

Դոփ-դոփիկ

Մենք դոփում ենք ոտքերով /քայլել տեղում

Դոփ-դոփ-դոփ

Ծափ ենք տալիս ձեռքերով /ծափ գլխավերևում

Ծափ-ծափ-ծափ

Օրորում ենք գլուխը /գլուխը թեքում են աջ և ձախ

Բարձրացնում ենք ձեռքերը

Եվ վազում ենք պտտվելով /տեղում վազք՝ պտույտներով:

Զրույց ՀՀ խորհրդանիշների մասին

Երեխաներ, յուրաքանչյուր հանրապետություն ունի երեք տարբերակիչ, իրեն բնորոշ նշան՝ դրոշը, զինանշանը և հիմնը.

- Երեխաներ դուք հաճախակի եք լսում «Կարմիր, կապույտ, ծիրանագույն» երգը:
- Եկե՛ք մեկ անգամ էլ լսենք այն:
- Սա մեր պետական դրոշն է՝ եռագույնը: Ինչո՞ւ են հատկապես այդ գույներն ընտրված մեր դրոշի համար:
- Ի՞նչ է լինում կարմիր գույնի:
- Ի՞նչ է լինում կապույտ:
- Ի՞նչ է լինում ծիրանագույն:
- Ուրեմն՝ Հայաստանի դրոշի գույներն են՝ կարմիը, մեր ժողովրդի հաղթանակն է, կապույտը՝ Հայաստանի պարզ երկինքը, ծիրանագույնը՝ մեր ժողովրդի ստեղծագործ աշխատանքը, որը արևային ուժ ունի:

Հայաստանի զինանշանի վրա պատկերված են արծիվն ու առյուծը, որոնց գլուխները նայում են տարբեր կողմեր: Այդ կենդանիներն առանձնանում են իրենց ուժով, խելքով, գեղեցկությամբ և խորհրդանշում են ուժ, աշխատանք, գեղեցկություն:

Մեր զինանշանը

Ահա զինանշանը

Գրավիչ է ու պերճ,

Ինչ հմայք է պահել իր մեջ

Որ վեհորեն շողում է միշտ

Որպես ուժի, աշխատանքի

Խաղաղության խորհրդանիշ:

Հայ մարդկանց անձնագրերի, հայկական դրամի, բոլոր կառավարական շենքերի վրա պատկերված է ՀՀ զինանշանը:

Մեր հանրապետությունը ունի իր պետական երգ-հիմնը՝ օրհներգը: Դա հատուկ հանդիսավոր երգ է: Եվ այն հնչում է բոլորը պետք է ոտքի կանգնեն:

Ֆիզկուլտ դադար՝ «Շոգեքարշ շարժվիր»

Հնչեցրո՛ւ զանգը, Ավե՛տ,

Խաղը սկսենք իսկույնհետ:

Ով ուզում է դառնալ վագոն,

Թող պահպանի կարգ ու կանոն

Կպչենք դու ինձ, ես՝ նրան

Շարժվենք դեպի Երևան:

Զրույց Հայաստանի Հանրապետության շուրջ.

- Մեր երկրում բնակվող բոլոր մարդիկ նշում են ՀՀ տոները: Որոնք են դրանք՝ ՀՀ ստեղծման օրը, ՀՀ անկախության հռչակման օրը, Հայոց բանակի օրը, մայրաքաղաքի օրը:
- Ինչո՞ւ ենք հայրենիք անվանում այն վայրը, ուր ծնվել ենք մենք, մեր պապերը, նրանց ծնողները:
- Ի՞նչ լեզվով են խոսում Հայաստանում ապրող մարդիկ:
- Ինչպե՞ս են անվանում մարդկանց, ովքեր ապրում են Հայաստանում:
- Ինչպո՞ւ են հայոց լեզուն մայրենի կոչում:

Ակնկալվող վերջնարդյունք.

1. Ուղղի համապատասխան հարցեր, տեղեկություններ ստանալու նպատակով:
2. Ավարտին հասցնի անավարտ պատմությունը:
3. Խոսքով ներկայացնի շրջապատող միջավայրի, բնության երևույթների փոխկապակցվածությունը:

Կապը չափորոշչի հետ-ԽՀ-(Ե)-(ի), (Ա) (Դ) ՀՍԱ-(Ա)-(-ե)

Մեթոդիստի դիտարկում

Պարապմունքի պլանավորումը համապատասխանում է տարիքային խմբի ծրագրին: Ընտրված անհարժեշտ պարագաները, նկարները նույնպես համապատասխանեցված են պարապմունքին: Պարապմունքի տեսակը զրույց:

Դաստիարակի խոսքը հստակ է, մատչելի, գրական, ձայնային տեմբրը մեղմ: Պարապմունքը տարվել է ԽՀԿ համակարգով, պահպանվել է տևողությունը:

Կիրառվել են փոխգործուն մեթոդներ, հնարներ (հարցադրում, հարցերի միջոցով վերապատմում, խաղային մեթոդներ, ոտանավորի ուսուցում, նկարների միջոցով պատմում):

Դաստիարակը կարողացավ հասնել պարապմունքի նպատակին, ըստ որի անհրաժեշտ էր, երեխաներին տալ գիտելիքներ հայրենիքի, հայկական բանակի ստեղծման մասին, դաստիարակել հպարտության զգացում, զարգացնել ստեղծագործական միտքը, կապակցված խոսքը, հարստացնել բառապաշարը, երեխաներին ծանոթացնել Հ-ի քարտեզին, ՀՀ-ի զինանշանին, դրոշին: Եվ որ ամենակարևորն էր՝ պարապմունքի ավարտին երեխաները կարողացան պարապմունքի ընթացքում ստացած գիտելիքիների շնորհիվ հյուսել կապակցված խոսք՝ փոքրիկ պատմություններ ներկայացնելով: Խոսքի կառուցման կարողությունը ձևավորվեց նոր ուսուցանված բառապաշարի շնորհիվ: Պարապմունքի ընթացքում երեխաները ունկնդրեցին հայրենասիրական բանաստեղծություններ, փոքրիկ պատմվածք, կատարեցին հանելուկների գուշակում, կիրառվեց ֆիզկուլտ դադար:

Երեխաները ոգևորված էին, շատ ակտիվ, հայրենասիրական, խրոխտ տրամադրությամբ ընդգրկված էին բոլոր երեխաները: Կատարվեց նաև ենթախմբային աշխատանք:

Պարապմունքի ավարտին երեխաները ունկնդրեցին նաև ՀՀ օրհներգը:

Որպես առաջարկություն, կառաջարկեյի պարապմունքի ավարտից հետո զբոսանք կազմակերպել և այցելել քաղաքի երկրագիտական թանգարան կամ մոտիկ զորամաս՝ բանակի հետ ծանոթացնելու նպատակով:

Եզրակացություն

Պարապմունքի ընթացքում կատարվեց ուսումնասիրություն՝ «Հայրենաճանաչողական ձևավորման կարևորությունը» թեմայով: Կարծում եմ կիրառված մեթոդների միջոցով որոշակիորեն գիտելիքներ փոխանցվեց երեխաներին՝ հայրենաճանաչողական բոլոր զգայարանների միջոցով՝ հոգի, սիրտ, միտք, եռամիասնության մշտական կիրառմամբ:

Պարապմունքը նպաստեց ինքնություն և քաղաքակրթությունների արժեհամակարգերը ճանաչող անհատի ձևավորմանը, որն էլ միտված կլինի իր գործունեությամբ նպաստելու հայ հասարակության զարգացման ու վերափոխմանը՝ այն սկսելով հենց անձից:

Պարապմունքի ընթացքում բացահայտվեց երեխաների հոգում պատերազմի թողած հետքերը, հիշատակվեց մեր հերոսների անունները, նրանց կատարած սխրագործությունները, որը ավելի ոգևորեց մատաղ սերունդին:

Գրականության ցանկ

1. Zatsepina M. B.-«Ռազմական փառքի օրեր. Նախադպրոցական հայրենասիրական դաստիարակություն»
2. Դաշնային օրենք «Կրթության մասին Ռուսաստանի Դաշնություն» Մոսկվա 2013թ.
3. Ս. Չիբուխչյան, Լ. Սարգսյան- «Մայրենի լեզվի պարապմունքները մանկապարտեզի ավագ խմբում ուսումնամեթոդական ձեռնարկ»
4. Bagarova O. B.- Նախադպրոցականների բարոյական և հայրենասիրական դաստիարակություն»